ԱԼԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ALIK HAKOBYAN

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՈՒՄԸ

«Քաղաքական խոսույթ» եզրույթը կարելի է հանդիպել ոչ միայն քաղաքականությանն առնչվող հետազոտություններում, այլեւ ամենօրյա խոսակցությունների ու բանավեճերի ժամանակ: Խոսքի այդ տեսակը ծնվել է դասական Հունաստանում եւ զարգացել ցիցերոնյան Հռոմում: Այն ի հայտ է եկել ի պատասխան «կյանքն ու քաղաքը ղեկավարելու պահանջների, (...), հանրային խոսքը վերածելով համոզելու գործիքի»: /Charadeau, Maingueneau 2002:277-278/: Գիտական միտքը «քաղաքական խոսույթը համարում է ճառի մի տեսակ, որի միջոցով բանախոսը (անհատ, մարդկանց խումբ, կուսակցություն եւ այլն) հետապնդում է իշխանության հասնելու նպատակ՝ պայքարելով ընդդեմ մեկ այլ անհատի, խմբի կամ կուսակցության» /Salvastru, Constantin, "La logique du pouvoir et la dynamique du discourse politique", [En ligne]/: Այսինքն խոսքը քաղաքական գործչի համար հանդիսանում է իշխանության հասնելու հիմնարար «գործիք»: «Քաղաքական խոսույթի» ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականները խոսքի այդ տեսակի համար կարեւոր են համարում լեզվի գործաբանական դրսեւորումները լեզուն դիտարկելով որպես գործողություն, երբ բանախոսը տարբեր խոսքային ռազմավարությունների միջոցով փորձում է ազդել լսարանի վրա՝ նպատակ ունենալով ի շահ իրեն փոխել նրա պատկերացումները: Այլ կերպ ասած, բանախոսը ցանկանում է համոզել լսողին ընդունել իր տեսակետը կոնկրետ իրավիճակի վերաբերյալ:

Խոսույթը հետազոտման առանցքային թեմա է եղել այնպիսի գիտնականների համար, ինչպիսիք են Թոյն վան Դեյքը, է. Բենվենիստը, Յու. Համբերմասը, Ֆուկոն, Գ. Կուկը, Գ. Ա Օրլովան, Վ. Գ Բորբոտկոն, Յու. Ստեպանովը եւ այլք: Գիտնականները տարբեր բնութագրումներ են տվել խոսույթին: Բավական դիպուկ է Տ.Ա վան Դեյքի բնորոշումը. «...խոսույթը հանդիսանում է հաղորդակցական երեւույթ, որի բաղկացուցիչ մասն է կազմում նաեւ սոցիալական ենթատեքստը», այսինքն՝ տեղկությունը հաղորդակցության մասնակիցների եւ ասույթի ընկալման գործընթացի վերաբերյալ /Андреев 1999:62/: Ուշադրության արժանի է նաեւ Գ. Կուկի այն տեսակետը, ըստ որի «խոսույթը տեքստի եւ ենթատեքստի ամբողջությունն ու փոխազդեցությունն է» /Апресян 1998:33/: Պատմահամեմատական լեզվագիտության ոլորտի գիտնական է. Բենվենիստը եւս լուրջ ավանդ է ներդրել խոսույթի ուսումնասիրության

գործում: Սակայն երբ հաղորդակցական խոսույթի նառուցվածքը կազմում են մի քանի տիպեր (խոսքային հաղորդակցության մեջ մտնող խոսանցության թեմայի նախաբանի ներկայացումը եւ դրա վերեռագումը, դերերի ու թեմաների փոփոխությունը հաղորդակցական պայմանների հաղորդակցական ակտի սպասումը) ապա նրանց յուրաքանչյուրը պայմանավորված է արտաքին եւ ներքին գործոնների համալիր համակարգով /Белова 2004:13/: «Խոսույթ» հասկացության վերաբերյալ ուշագրավ տեսակետ է ներկայացրել Ն. Ֆուկոն՝ նրա բնորոշմամբ, «խոսույթ այն է, որը ստեղծվում է նշանների, ձեւակերպումների համադրությունից եւ մի շարք յուրակերպություններից ու դասողություններից»: Հիշեցնենք, որ ըստ նրա, հանդիսանալ է «անհնարին պատմական կանոնների համադրություն, որոնք սահմանում են կոնկրետ դարաշրջանում արտահայտման գործառույթ հասկացման պայմանները կոնկրետ սոցիալական ժամանակաշրջանում տնտեսական կամ աշխատանքային տիրույթում» /Белова 2004:13/: Ժամանակակից լեզվաբաններն օգտագործում են «քաղաքական խոսույթ» եւ «քաղաքական ելույթ (խոսք)» եզրույթները: Այդ երկու եզրույթների միաձուլության առումով լեզվաբանության մեջ գոյություն ունի վեճ: Որոշ լեզվաբաններ համոզմունք են հայտնում, որ քաղաքական լեզուն «հատուկ նշանային համակարգ է՝ նախատեսված հատուկ քաղաքական հաղորդակցության համար» /Баранов 2001:23/, մյուսներն էլ պնդում են, որ «քաղաքական խոսույթ» ասելիս լայն հասկացություն է, քանի որ ընդգրկում է ոչ միայն հանրային քաղաքական բանավեճերի լեզուն, այլ քաղաքական փաստաթղթերի լեզվական առանձնահատկությունները /Петренко 2003/: Ժամանակակից լեզվաբանության մեջ կա նաեւ կարծիք, որ «քաղաքական խոսույթ», «քաղաքական հաղորդակցություն», «քաղաքական խոսք», «հանրային կարծիքի լեզու», «հանրային ոլորտի լեզու», «քաղաքականության լեզու» եզրույթները հանգես գործադրվում են որպես հոմանիշներ, իսկ քաղաքական լեզուն «խոսույթային գործոնների համադրումն է, որը ձեւավորում է քաղաքական հաղորդակցության ոլորտը» /Нагорная 2005:72/: Ըստ Ա. Ալթունյանի, քաղաքական գործիչների ուշադրությունը կենտրոնանում է ոչ թե արդեն բոլորին հայտնի գաղափարական կառույցների, այլ դրանց փոփոխության կամ դրանք ներկայացնելու միջոցների վրա /Алтунян 2006:7/: Լեզվաբանը պնդում է, որ հենց քաղաքական խոսույթն է հանդիսանում քաղաքական տեքստերի եւ քանավոր ելույթների ամբողջականությունը՝ սահմանափակված սոցիումի եւ ժամանակի շրջանակներում: /Алтунян 2006:6/: Ալթունյանի այդ վարկածը կիսում է նաեւ Ե. Օպարինան՝ նշելով, որ «քաղաքական խոսույթն իր մեջ հանդարում է ստեղծված եւ ստեղծվող տեքստեր՝ հասարակական քաղաքական գործունեության ոլորտում հաղորդակցվելու համար» /Опарина 2002: 20/:

Հետազոտողների հիմնական մասը քաղաքական խոսույթը համարում է հանրային մենախոսության տեսակ, որին բնորոշ են լեզվական իրավիճակների այնպիսի տարրեր, ինչպիսիք են բազմանդամ լսարանը եւ պաշտոնական իրավիճակը /Алексеев 2001: 15/: Դրանով է պայմանավորված այն պնդումը, որ հռետորության ուսումնասիրության հիմնական առարկան եղել է եւ կա քաղաքական խոսույթը: Քաղաքական ելույթների տեքստերի կառուցվածքը, որպես կանոն, բնդգրկում է երեք հիմնական բաղադրիչ՝ նախաբան, հիմնական մաս եւ եզրակացություն: Դրանցից յուրաքանչյուրն, ըստ լեզվաբանների, ունի իր կոնկրետ ու որոշակի գործառույթը:

- Նախաբանը (exordium, narratio) նպատակ ունի գրավել լսարանի ուշադրությունը, նաեւ կողմնորոշել նրա ընտրությունը, այսինքն լսարանին պատրաստել հետագա տեղեկությունն ընկալելու համար:

- Հիմնական մասը (argumentation: confirmato/refutatio), որպես քաղաքական խոսույթի կառուցվածքային միավոր, ներառում է նյութի շարադրանքը եւ փաստարկումը: Տեղեկության շարադրանքի հիմնական մեթոդներն են ինդուկտիվ մեթոդը (կոնկրետից դեպի ընդհանուր) եւ դեդուկտիվ մեթոդը (ընդհանուրից դեպի մասնավոր):

- Քաղաքական ելույթների վերջաբանն (peroratio) իրենից ներկայացնում է խոսողի հետահայաց վերլուծությունը, ով վերադառնում է հիմնական մասի կարեւորագույն դրույթներին եւ կառուցում է վերջաբանը, որպես դրանց մասին հիշեցում: Քաղաքական ելույթի տեքստերին բնորոշ է շրջանակային կրկնողության օգտագործումը. ելույթի վերջին հատվածը գրեթե միշտ կրկնում է նախաբանի համապատասխան հատվածները:

Քանի որ քաղաքական խոսույթի հիմնական գործառույթը համոզելն է, հետազոտողները դրա իլոկուտիվ գործողությունը համարում են հրամայական. միեւնույն ժամանակ համոզմունք հայտնելով, որ այդ գործողությունը հնարավոր չէ առանց լրացուցիչ գործողությունների, որոնք հիմնավորում են, բացատրում, նախապատրաստում որոշակի նպատակների ընկալումն ու իրացումը: Գիտական գրականության մեջ որպես այդ շարքի կարեւոր բաղադրիչներից մեկը նշվում է բանախոսը (հաղորդակցման սուբյեկտը), հասցեատեր-օբյեկտը, որը հաղորդակցության եւ հաղորդակցական իրավիճակի թիրախն է: Ըստ այդ մոտեցման, որքան էլ իր բնույթով քաղաքական խոսույթը մենախոսային է, այդուամենայնիվ այն պարունակում է երկխոսությանը բնորոշ տարրեր: Քաղաքական խոսույթի ուսումնասիրության համար հետազոտողները կարեւոր են համարում հաղորդակցական իրավիճակի վերլուծությունը, այսինքն՝ բոլոր այն գործոնների վերլուծությունը, որոնք ազդում են բանախոսի եւ լսարանի վրա: Նրանք քաղաքական ելույթի ուսումնասիրության ժամանակ հաշվի են առնում երեք համատեքստ.

- ելույթի համատեքստը (բառերի եւ նախադասությունների նշանակությունը տեքստի համակարգում).

- լեզվական իրավիճակի համատեքստը (ով է ելույթ ունեցողը, ինչ նպատակով, ինչ իրավիճակում).

- գլոբալ հասարակական քաղաքական իրավիճակի համատեքստը:

Քաղաքական խոսույթի բանախոսը հանդիսանում է կոնկրետ սոցիալական, քաղաքական եւ պատմական խմբի ներկայացուցիչ, որը բարձրաձայնում է տվյալ խմբի (կուսակցություն, խավ, կազմակերպություն) մտքերը, դիրքորոշումները եւ պատկերացումները, եւ ըստ այդմ էլ ձեւավորվում է համապատասխան տեքստը: Քաղաքական խոսույթի հասցեատերը նա է, ում վրա բանախոսը ազդում է՝ ըստ նպատակի, օգտագործելով փաստարկման համակարգը եւ լեզվարտահայտչամիջոցները: Փաստարկող խոսույթը (խոսութային տեքստը), որը դիտարկվում է որպես իրական կամ ենթադրյալ բանավեճի մի մաս, բնորոշվում է որպես արտաբերված կամ գրավոր ամրագրված ասույթների մի շարք՝ ի նպաստ մեկ կամ մի քանի տեսակետների պաշտպանության /Андреев 999 17/: Ընդ որում, տեսակետները կարող են լինել խիստ տարբեր, քանի որ դրանք կարող են առնչվել ցանկացած իրադարձության, մտքի, գործողության, փաստի, հարաբերությունների, եւ կարող են համընկնել կամ չհամընկնել ընդդիմախոսի հայացքների հետ: Դա էլ հիմք է տալիս գիտական շրջանակներին կարծիքների միջեւ գոյություն ունեցող տարբերություններն ի հայտ բերելու անհրաժեշտությունը համարել փաստարկող խոսույթի առաջացման պատճառը: Փաստարկող խոսույթի կառուցվածքում գլխավոր դերակատարումն ի սկզբանե վերապահված է բանախոսին, եւ այդ դեպքում հասցեատերը դառնում է ախոյան, որն ընդունում կամ չի ընդունում գլխավոր դերակատարի տեսակետը /Андреев 1999..20/:

Մենք նույնիսկ առօրյա կայանքում շատ հաճախ ստիպված ենք լինում ընդունելի դարձնել մեր տեսակետները եւ պաշտպանել դրանք ամենատարբեր իրավիճակներում: Ինչ-որ տեսակետ ընդունելի դարձնելու կամ ինչ-որ դիրքորոշում պաշտպանելու համար էլ դիմում ենք ամենատարբեր փաստարկների օգտագործմանը: Իսկ քաղաքական նպատակներ հետապնդող խոսքն, առավելեւս, ունի լուրջ փաստարկների անհրաժեշտություն, քանի որ դրա ազդեցության տիրույթն առավել լայն ու ընդգրկուն է: Հենց դրանով էլ պայմանավորված է բազմաթիվ հետազոտողների հետքրքրությունը քաղաքական խոսույթում կիրառվող փաստարկման լեզվարտահայտչամիջոցների կամ, այլ կերպ ասած, սոցիալ-քաղաքական փաստարկման նկատմամբ: Սոցիալ-քաղաքական փաստարկումը, որպես հաղորդակցական գործունեության տեսակ, հետազոտողները դիտարկում են քաղաքական խոսույթի շրջանակում, որը համարվում է փաստարկի իրացման միջոց: Քաղաքական գործիչների

կողմից լեզվի օգտագործման ժամանակակից հետազոտությունները քաղաքական խոսույթը դիտարկում են որպես «լեզվի քաղաքական գործառույթ» (Գ. Դասուել), «խթանիչ գործառույթ» (Դ. Բլումֆիլդ), «քարոզչական գործառույթ» (Ն. Ա. Սլյուսարեւա): Քաղաքական խոսույթի ուսումնասիրության հարցում լեզվաբաններն առավել մեծ դեր են վերապահում բանավոր խոսքի ու դրա արտահայտած փաստարկների ազդեցության հետազոտությանը: Որոշ լեզվաբանների կարծիքով, բանավոր հաղորդակցությունը կարեւորագույն դերակատարում ունի մարդկային գործունեության ցանկացած, այդ թվում եւ սոցիալ-քաղաքական փաստարկման ոլորտում: Մի շարք լեզվաբաններ էլ, վերլուծելով գաղափարախոսության արտացոլումը բանավոր խոսքի կառուցվածքում, ընդգծում են, որ «գաղափարները պետք է մարմնավորեն մտքի սոցիալական իմաստն ու հանրային կարծիքը» /Мухарямов. 2002:32/. Քաղաքական խոսույթի ժամանակակից վերլուծությունը հետաքրքիր է նաեւ նրանով, որ շատ հետազոտողների համոզմամբ, այժմ առավել, քան երբեւէ քաղաքականության մեջ լեզուն հանդիսանում է ոչ միայն կարծիք ձեւավորելու ու արտահայտելու գործիք, այլեւ դա քողարկելու միջոց: Այդտեղից էլ բխում է այն եզրակացությունը, որ «լսարանին լեզվի օգնությամբ մանիպուլյացիայի ենթարկելու հնարավորությունն անքակտելի է լեզվական նշանի բովանդակությունից» /Шестакова. 2003:.103/: Քաղաքական խոսույթի հետազոտությամբ զբաղվող գիտնականներն այն համարում են ոչ միայն քաղաքական խնդիր, այլեւ դիտարկում լեզվաբանական եւ մշակութային տիրույթում, հետեւաբար՝«... խոսել լեզվի մասին եւ չխոսել հասարակության վիճակի եւ հանրային գիտակցության մասին հնարավոր չէ» /Черская. 2001:57/: Հենց այստեղից էլ բխում է այն տեսակետը, որ քաղաքական խոսույթի հիմքում ընկած են այնպիսի արժեքներ, որոնք ունեն փաստարկային մեծ ներուժ: Անհերքելի է, որ արժեքային համակարգը ձեւավորում է հասարակական գիտակցությունը, որին էլ շատ հաճախ հղում են կատարում քաղաքական գործիչները: «Քաղաքական խոսույթի» զարգացումը շատ գիտնականներ պայմանավորում են նաեւ ԶԼՄ-ների զարգացմամբ, որոնք ստեղծում են «մեծամասշտաբ քաղաքական խոսույթ»: Գիտնականներից շատերը պնդում են, որ քաղաքական խոսույթը հանդիսանում է ամենահեղինակավորներից մեկը փաստարկային խոսույթի շարքում, եւ ըստ այդմ էլ դրա ուսումնասիրությունն արժանի է առանձնահատուկ ուշադրության: Հետազոտողները համարում են, որ քաղաքական խոսույթն առհասարակ ձեւավորվում է ազգային լեզվի հիմքի վրա, որն օգտագործում են քաղաքական գործիչները, կուսակցությունները կամ իշխանական կառույցները՝ ամենատարբեր նպատակների հասնելու համար, որոնց գիտական միտքը փորձել է որոշակի դասակարգում տալ.

- *հասարակական համաձայնության սահմանում,*

- բազմաշերտ հասարակության եւ բազմաթիվ հասարակական հետաքրքրությունների պայմաններում որոշակի քաղաքական եւ սոցիալ-գաղափարական ռազմավարության ընդունում եւ հիմնավորում,

- «ստատուս քվոյի» պահպանում կամ վերացում,

- «ուղեղների լվացում», այս կամ այն գաղափարական մտքի պարտադրում զանգվածային գիտակցությանը /Алтунян 2006:22/:

Կապված սոցիալական փոփոխությունների, գլոբալիզացիայի, քաղաքական խոսույթի տեխնոլոգիականացման հետ՝ սոցիոլոգները, լեզվաբանները եւ այլ մասնագետներ հանգում են այն եզրակացության, որ լեզուն իշխանություն է /Апресян 1998:60/: Եվ քանի որ լեզուն անքակտելի է քաղաքականությունից եւ իշխանական հրաբերություններից, դա եւս մեկ հանգամանք է, որը «քաղաքական խոսույթը» դարձնում է առանձնահատուկ ուշադրության առարկա: Ժամանակակից քաղաքական խոսույթում քաղաքական գործչի խոսքի համոզելու ազդեցությունն ու լսարանի ընկալումը լեզվաբանները համարում են կարեւոր՝ պնդելով, որ համոզմունքներն ընդունակ են ձեւավորել կամ նույնիսկ կանխատեսել քաղաքական գործչի ու ընտրողի փոխհարաբերությունների մակարդակը: Քաղաքական գործչի շփման արդյունավետությունը կայանում է նրա՝ այլ մարդկանց հետ համագործակցելու ընդունակության, նրանց վարքագծին եւ աշխարհընկալմանը հարմարվելու, ներքուստ նրանց հետ միավորվելու մեջ, քանի որ «տարբերությունը ոչ թե կայանում է նրանց աշխարհների, այլ դրանց ֆիլտրերի մեջ, որոնցով ընկալվում են այդ աշխարհները. ասել է թե լեզուն ֆիլտր է, համոզմունքը եւս ֆիլտր է» /Куско 2001: 25./:

Լեզվաբանական գրականությունը տեքստերն, ըստ տեսակների, բաժանում է երեք հիմնական խմբի՝

1. նկարագրական (descriptif)
2. պատմողական (narratif)
3. փաստարկային (argumentatif)

«Քաղաքական խոսույթի» վերը ներկայացված սահմանումներն ու առանձնահատկությունները հստակորեն բնորոշում են, որ ցանկացած քաղաքական խոսույթի տեքստ հանդիսանում է փաստարկային, քանի որ դրա նպատակը ոչ թե ինչ- որ բան նկարագրելն է (description), ինչ-որ բան պատմելը (narration), այլ լսարանի վրա ազդեցություն գործելը՝ համոզելու նպատակով, ինչը հնարավոր է իրականացնել միայն փաստարկման միջոցով (argumentation): Այստեղից հանգում ենք այն եզրակացության, որ ցանկացած քաղաքական խոսույթ զինված է փաստարկների մեծածավալ գործիքակազմով, ինչն էլ ստեղծում է հետազոտության լայն դաշտ ինչպես բազմաթիվ այլ գիտությունների (տրամաբանություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, հռետորություն), այնպես էլ լեզվաբանության համար:

Գրականության ցանկ
1. Андреев В.И. Деловая риторика: Практ. курс делового общения и ораторско мастерства, Москва, Нар. образование, 1999.
2. Апресян Г.З. Ораторское искусство,Москва, МГУ, 1998.
3. Алгунян А.Г. Анализ политических текстов: Учеб. Пособие, Москва, Логос, 2006.
4. Алексеев А.П. Аргументация. Познание. Общение, Москва, Изд-во МГУ, 2001.
5. Белова Е.Н. Структура и семантика аргументативного дискурса: Автореф. дис. ... Канд. филол. наук: 10.02.04 / Рос. гос. пед. ун-т им. А.И. Герцена. СПб., 2004
6. Баранов А.Н. Введение в прикладную лингвистики, Москва, Эдиториал, 2001.
7. Бацевич Ф.С. Основы коммуникативной лингвистики: Учебник, М., Академия, 2004.
8. Демянков В.З. Политический дискурс как предмет политологической филологии / Политическая наука. Полит. дискурс: История и современные исследования. 2002. № 3.
9. Куско К.Я. Дискурс иноземной коммуникации: концептуальные вопросы теории и практики, Львов, Изд.Львовского Национального университета им. Ивана Франко, 2001.
10. Мухарямов Н.М. Политическая лингвистика как научная дисциплина / / Политическая наука. Политический дискурс: История и современные исследования: Сб. М., 2002.
11. Нагорная Л.Б. Политический язык и языковая политика: диапазон возможностей политической лингвистики / НАН Украины, Институт политических и этнонациональных исследований. Москва, Мировоззрение, 2005.
12. Опарина Е.О. Метафора в политическом дискурсе / / Политическая наука.Политический дискурс: История и современные исследования: Сб. науч. Тр, М., РАН ИНИОН, 2002.
13. Петренко В.В. Политический язык как средство манипулятивного воздействия: Автореф. дис. ... канд. полет, наук: 23.00.02 / Киевский нац. ун-т им. Т. Шевченко.- М., 2003
14. Шестакова Л.Л. Политическая культура и язык политики, М., Редакция журнала "Collegium", 2003.
15. Черская И.Н. Установка и убеждение как доминирующем признак политического дискурса / / Весник Харьковского университета. - 2001. - №52
16. Centre national de Ressources Textuelles et Lexicales (CNRTL) [En ligne] URL: http://www.cnrtl.fr/etymologie/discours
17. Dubois J. Dictionnaire de linguistique et des siences du langage, Paris, Larousse, 1994.
18. Charadeau P. Maingueneau D. Dictionnaire d'analyse du discourse, Paris, Seuil, 2002.
19. Cf. References bibliographiques. Sites web. Politique, [En ligne] URL:<http://www.ac-orleans-tours.fr/lettres /coin_eleve /etymon /hist/ politi.htm>
20. Salvastru, Constantin, "La logique du pouvoir et la dynamique du discourse politique", [En ligne]URL:http://www.adelinotorres.com/metodologia/La%20logique%20du%20pouvoir%20et%20la%20dynamique%20du%20di...

PARTICULARITIES OF POLITICAL DISCOURSE AND SOCIAL-POLITICAL ARGUMENTATION

Generally the researchers consider that the main subject of rhetoric is the political discourse. The sociologists, the linguists and other specialist think that due to social changes, globalization, technological development the language became a power, that's why the speech having a political aim needs serious argumentation. This is the reason that many researchers are interested in linguistic means of argumentation in political discourse or in social-political argumentation. We explain in this article that every text of political speech is argumentative because its aim is not description or narration of something, but argumentation. In this article we tried to present the particularities of political discourse and social-political argumentation. We conclude that every political discourse is armed by a large number of argumentation tools which create a wide fied of research for many sciences like sociology, psychology, rhetoric and for linguistic as well.